

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 դեկտեմբերի 2016 թ.

N 780-Ն

Բ. Ստեփանակերտ

**ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բուսական աշխարհի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի «գ» կետը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ն ր Ի Ե Ո Ւ Մ Է**.

1. Սահմանել բուսական աշխարհի պետական կադաստրի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետին՝ վեցամսյա ժամկետում՝

1) սահմանված կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգը.

2) հաստատել բուսական աշխարհի պետական կադաստրի վարման մեթոդական ուղեցույցը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի բուսական աշխարհի պետական կադաստրի (այսուհետ՝ պետական կադաստր) վարման կարգը:

2. Պետական կադաստրը բուսական աշխարհի օբյեկտների իրավական ռեժիմի ֆանակական ու որակական բնութագրերի, վիճակի, բնապահպանական, մշակութային և տնտեսական արժեքների, հանրապետական ու շրջանային տարածվածության, պաշարների և օգտագործման մասին տեղեկությունների ու փաստաթղթերի համակարգ է:

3. Պետական կադաստրի վարումը նպատակ ունի բացահայտելու բուսական տեսակների և համակեցությունների, դրանց անելավայրերի ֆանակական և որակական փոփոխությունները:

4. Պետական կադաստրի վարման համար կարող են օգտագործվել գիտական ուսումնասիրությունների, պետական հաշվառման և մոնիթորինգի, բուսական պաշարների օգտագործման մասին պայմանագրերի և այլ ակտներ:

5. Պետական կադաստրը վարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին:

6. Պետական կադաստրը կազմված է հետևյալ բաժիններից՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի վայրի բույսերի տեսակային բազմազանություն (ստորակարգ, բարձրակարգ բույսեր և սնկեր):

2) բուսական աշխարհի օգտագործում:

3) բուսական աշխարհի պահպանություն, վերարտադրություն:

7. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված պետական կադաստրի բաժինները ներառում են բուսական տեսակի մասին հետևյալ տեղեկատվությունը՝

- 1) կարգաբանական պատկանելությունը և գիտական անվանումը (հայերեն, լատիներեն), կարգավիճակը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կարմիր գրքի և Բնության պահպանության միջազգային միության (IUCN) դասակարգումը.
- 2) բուսատեսակի տարածվածությունը՝ աշխարհագրական և վարչատարածքային.
- 3) անելավայրը՝ սվյալ բուսատեսակի անելավայրի էկոհամակարգային նկարագիրը և բնորոշ ուղեկցող բուսատեսակները.
- 4) արժեքները՝ բուսատեսակի բնապահպանական, գիտական, մշակութային և տնտեսական արժեքները.
- 5) պաշարը՝ աշխարհագրական որոշակի տարածքում օգտագործման ենթակա քանակությունը.
- 6) ֆաղաֆեղներին և իրավաբանական անձանց օգտագործման սրված վայրի բույսերը (օգտագործման իրավունքի և տեսակի, թույլատրված ու փաստացի).
- 7) պոպուլյացիայի վիճակը, սպառնալիքները.
- 8) տեսակի պահպանության ու կայուն օգտագործման միջոցառումները՝ առկա և նախատեսվող.
- 9) տեղեկատվության սկզբնաղբյուրը:

II. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Պետական կադաստրի վարման տարեկան ծրագրերն օրենքով սահմանված կարգով մշակում է լիազոր մարմինը:
9. Պետական կադաստրի սվյալները գրանցվում են գրանցամատյանում, որի օրինակելի ձևը հաստատվում է լիազոր մարմնի կողմից:
10. Պետական կադաստրում սվյալների գրանցումը մշտապես իրականացվող գործընթաց է, որն ապահովում է սվյալների համալրումը, դասակարգումը, պահպանումը և փոփոխությունների օպերատիվ մուտքագրումը:
11. Պետական կադաստրի վարման գրանցամատյաններում ներառվում են նաև բուսական աշխարհի պետական հաշվառման սվյալները: Բուսական աշխարհի պետական հաշվառումն իրականացվում է պարբերաբար՝ ոչ ուշ, քան յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ:
12. Պետական կադաստրի վարման գրանցամատյանները վարվում են ինչպես փաստաթղթային, այնպես էլ էլեկտրոնային ձևով, որոնց վարման ժամանակ պետք է ապահովվի դրանց համադրելիությունը: Փաստաթղթային և էլեկտրոնային կրիչների միջև սվյալների տարբերության դեպքում հիմն է ընդունվում փաստաթղթային տարբերակը:
13. Պետական կադաստրի վարման գրանցամատյաններում սվյալների մուտքագրումը և փոփոխությունն իրականացվում են դրանք ներկայացվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:
14. Պետական կադաստր վարող լիազոր մարմինը հեզրիտ մուտքագրում է բուսական աշխարհի հաշվառում և ուսումնասիրություններ իրականացնողների ներկայացրած փաստաթղթային և էլեկտրոնային սվյալները:

15. Սույն կարգի 7-րդ կետում նշված պետական կադաստրի ամփոփ տվյալները համարվում են պաշտոնական և կարող են հիմք հանդիսանալ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ իրենց լիազորությունների սահմաններում որոշումներ ընդունելիս:

16. Պետական կադաստրի տվյալները կարող են տրամադրվել տեղեկանքների, հաշվետվությունների, գրաֆիկական և այլ նյութերի տեսքով:

17. Իրավաբանական անձինք և ֆազաբացիները պետական կադաստրի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով դիմում են լիազոր մարմին:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ